ՀՈՎՀԱՆՆԵՍ ՁԱՏԻԿՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՓՈՒԼԵՐԸ

Յուրաքանչյուր ժողովրդի պատմություն ունի իր գերխնդիրը: Պատմականորեն ձևավորված այս երևույթը բնականոն լուծում է ստանում այն պարագայում, երբ ժողովուրդն ապահովված է իր գոյության պահպանության հզոր միջոցով՝ պետականությամբ, որը հնարավորություն է տալիս լուծել ոչ միայն գերխնդիրը, այլև բացառել մարդկային ու տարածքային կորուստները: Այդ պայմաններում համաչափորեն ձևավորվում և ամբողջանում է նաև պետականության հիմքը՝ ազգային գաղափարախոսությունը:

Այն ժողովուրդները, որոնք կրել են պատմության դաժան հարվածները, կորցրել են պետականությունը, զրկվել են նաև ազգային գերխնդիրը լուծելու հնարավորությունից: Այդ ժողովուրդներին բաժին է հասել գոյապահպանության դժվարին խնդրի լուծումը:

Հայ ժողովուրդը պատկանում է այդ ժողովուրդների թվին: Իր բազմադարյա պատմության ընթացքում հայ ժողովուրդը ազգային գոյապահպանության համար պայքարել է մի քանի ճակատներով և անողոք ժամանակներում, ճնշման ու հալածանքների, կոտորածների ու գաղթի պայմաններում ավարտուն տեսքի բերել ազգային գաղափարախոսությունը:

Հայոց պատմության տարբեր ժամանակահատվածներում ձևավորվեցին ազգային գաղափարախոսության բաղկացուցիչ մասերը՝ Հայրենիք, ազգային ու պետական մտածողություն հասկացությունները, դրանց հանրագումար Հայկական հարցը, որը ազգային գաղափարախոսության հիմքն է:

Հայ պատմագրության տարբեր սերունդների ներկայացուցիչներ են անդրադարձել Հայկական հարցին: Սակայն, դժբախտաբար, հայ ժողովրդի հերոսական ոգորումների հանրագումար խնդիրը այսօր չի ենթարկվել գիտական խորը ուսումնասիրության, որն այսօր դարձել է հրամայական պահանջ, որովհետև անհրաժեշտություն է դառնում ազգային գաղափարախոսության բարձրակետի՝ քաղաքական հայագիտության խոր ու բազմակողմանի մշակումը, որը ոչ միայն քաղաքական աշխարհաճանաչման , արտաքին քաղաքականության հիմքն է, այլև հայոց պետականության դիվանագիտական գործունեության մարտավարության ու ռազմավարության բանալին, մի հզոր գործոն, որը եթե ոչ բացառում, ապա նվազեցնում է սխալվելու հավանականությունը:

Յուրաքանչյուր գաղափարախոսություն, մինչև կատարելության հասնելը, անցնում է ժամանակահատվածների բարդույթների միջով, ավարտուն տեսքի գալիս. երբ ձևավորվում է նրա հիմքը մտածողությունը: Վերջինս, բազմաթիվ փորձություններ հաղթահարելով, վերածվում է գաղափարախոսության:

Այդպիսի զարգացման ճանապարհ է անցել Հայկական հարցը, որը հայ ժողովրդին ուղեկցելով նրա կազմավորման շրջանից, նախնական տեսք ստացավ այն ժամանակ, երբ ձևավորվեց Հայրենիք հասկացությունը: Այնուհետև, Արտաշեսյան, Արշակունիների, Բագրատունիների թագավորությունների գոյության պայմաններում, Կիլիկիայի թագավորության շրջանում հիմնավորվեցին ազգային և պետական մտածողությունները, հիմքեր ստեղծելով ազգային գաղափարախոսության ավարտական փուլի համար: Սակայն, ազգային գաղափարախոսության ձևավորման բնականոն զարգացումը խաթարվեց պետականության կորստի, արաբական, թուրքմենական ցեղերի, մոնղոլական, Լենկ Թեմուրի արշավանքների, ապա թուրք-պարսկական պատերազմների պատճառով, որոնց ընթացքում անկրելի կացություն ստեղծվեց հայության համար: Ժողովրդին ամ ծանր վիճակից փրկելու նպատակով, ծնունդ առավ Եվրոպայի օգնությամբ ազատագրվելու գաղափարը և հայկական պատվիրակությունները մայրցամաքում սկսեցին որոնել, փնտրել այն երկիրը, որը օգնության ձեռք կմեկներ, սատար կկանգներ ասիական բռնատիրությունների ծիրանիներում գտնվող ժողովրդի պայքարին:

Հայ քաղաքական միտքը դեռևս հասու չէր եվրոպական դիվանագիտության շահամոլ քաղաքականությանը և համառորեն ձգտում էր հավատակցությունը խորհրդանիշ դարձրած, տեղաշարժ մտցնել ազատագրության հարցում, որը բնականաբար ավարտվեց անհաջողությամբ, իսկ հայ ժողովուրդը վաստակեց խնդրատու անունը: Անհրաժեշտություն էր դառնում ազատագրության խնդիրը տեղափոխել նոր, դեռևս անծանոթ գործունեության դաշտ:

Ազատագրության հայ-հունական ծրագիրը, Իսրայել Օրու, Հովսեփ Էմինի, Սադրասի խմբակի, Աստրախանի մեծահարուստ Մովսես Ասրաֆյանի ծրագրերը հայության նկատմամբ ստեղծեցին քաղաքականացված ազգ մտածողությունը, որ, ինչ խոսք, նախորդ շրջանի նկատմամբ պետք է դիտել որպես առաջադիմական երևույթ:

Հայկական հարցի ծրագրային շրջանը քաղաքական հասունացում բերեց հայ ժողովրդին: Թևակոխելով 19-րդ դար, հայ ժողովուրդը իրական տեսքի բերեց նաև գործընկեր, զինակից հասկացությունները և դաս առնելով 18-րդ դարի փորձից, իր ազատագրության խնդիրը չէր կապում միմիայն օտար օգնության հետ և ջանքեր էր

թափում պայքարի նոր մարտավարության ու ռազմավարության մշակելու ուղղությամբ:

Կապված Ռուսաստանի մերձավորարևելյան նվաճողական քաղաքականության հետ, Արևելյան Հայաստանը միացվեց ռուսական կայսրությանը. Հայկական հարցը արծարծվեց միջազգային մի քանի պայմանագրերում և որպես միջազգային ինքնուրույն հարց, ավարտուն տեսք ստացավ Բեռլինի կոնգրեսում:

Թուրքական բռնատիրությունը եվրոպական տերությունների նշանակետի կարգավիճակից դուրս բերելու նպատակով, սուլթան Համիդը օսմանիզմի գաղափարախոսությունը դարձրեց պետական քաղաքականություն, ոչնչացնող յաթաղանի հարվածներն ուղղելով քրիստոնյա հպատակների վրա, իրականացնելով 1894-1896թթ. կոտորածները: Արևմտահայությունը, արևելահայության գործուն մասնակցությամբ դիմեց ինքնապաշտպանական մարտերի, ապա ձեռնարկվեցին հարձակողական, պատասխան պահանջող, 61-րդ հոդվածի իրագործումը պահանջող գործողություններ /Բանկ Օտտոման, Խանասորի արշավանք, Առաքելոց վանքի կռիվներ, Սասունի հերոսամարտ և այլն/: Ասպարեզ իջած ֆիդայական աստղաբույլը անձնազոհ պայքարի գնով ձգտում էր արևմտահայությանը դուրս բերել ազատագրական պայքարի:

Հայկական հարցի ազատագրական պայքարի փուլը շարունակվեց մինչև 1918թ.: Օգտվելով Առաջին աշխարհամարտի ընձեռած հնարավորությունից, երիտթուրքական վարչակարգը իրականացրեց իր արևմտահայության ոչնչացման հրեշավոր ծրագիրը: Մեծ եղեռնը իր հետ բերեց Հայկական հարցի բաղկացուցիչ մաս հանդիսացող ՀԱՅ ԴԱՏ ԵՎ ՊԱՀԱՆՋԱՏԻՐՈՒԹՅՈՒՆ հասկացությունները, որոնք հայ ժողովրդի արդար պահանջներն են ցեղասպանության ճանաչման ու պատմական Հայրենիքի նկատմամբ իրավունքների:

Ներկայացված տեսակետները, ինչպես նկատելի է, աղերսված են Հայոց պատմության տարբեր ժամանակահատվածների հետ, որոնք իրենց բովանդակությամբ չեն առանձնանում, չեն կտրվում պատմական հենքից և արտացոլումն են Հայկական հարցի զարգացման բնականոն ընթացքի:

Բերված շարադրանքը նպատակ ուներ ծանոթացնելու Հայկական հարցի մեր կատարած փուլային բաժանումների հետ, որոնք հիմնավորվում են պատմական փաստերով ու նրանցից բխող պատմական տրամաբանությամբ: Խորը ըմբռնելով Հայկական հարցի բովանդակությունն ու զարգացման միտումները, այն բաժանել ենք 9 փուլերի և 2 ենթափուլերի.

<u>Սկզբնավորման փուլ</u> – Ք.ա. 2498թ., մինչև Ք.ա. 189թ. Հայկ Նահապետի Տիտանյան Բելի դեմ ճակատամարտից, մինչև Արտաշեսյան հարստության հաստատումը, երբ հիմնավորվեց ՀԱՅՐԵՆԻՔ հասկացությունը, որն ավելի քան գաղափարական դարձավ Մարաստանի, Աքեմենյան Պարսկաստանի դեմ պայքարով, ներառյալ Ուրարտու անվանյալ հայկական պետության գոյությունը, ապա Ալ.Մակեդոնացու արշավանքների շրջանը: Այսինքն այն ժամանակա-

հատվածը, երբ կազմավորվեց հայ ժողովուրդը և իր անկախությունը պահպանելու համար անզիջում պայքարի մեջ մտավ օտար նվաճողների դեմ:

ՉԵՎԱՎՈՐՄԱՆ փուլ- Ք.ա.189թ. մինչև Ք.հ. 1274թ.: Այս փուլում հիմնավորվեցին ազգային ու պետական մտածողությունները: Արտաշեսյան, Արշակունիների, Բագրատունիների, Կիլիկիայի թագավորությունները բարենպաստ պայմաններ ստեղծեցին ազգային ու պետական գաղափարների հաստատման համար, սակայն գործընթացը խաթարվեց թագավորությունների անկման, քոչվորական ցեղերի նվաճողական արշավանքների, հայ ժողովրդին ծուլելու պարսկա-բուզանդական քաղաքականության, Հայաստանի բաժանումների և ժամանակաշրջանի այլ իրադարձությունների, Կիլիկիայի վրա սելջուկյան, մոնղոլական, եգիպտական հարձակումների պատճառով և 1274թ., Կիլիկիայից առաջին օգնության դիմումը հղվեց Եվրոպա:

Փուլի խոշոր երևույթներից էր 5-6-րդ դարերի, արաբական տիրապետության դեմ, մոնղոլական, թուրքմենական ցեղերի դեմ մղված ազատագրական պայքարը, որի ընթացքում էլ ոչ միայն հիմնավորվեցին ազգային ու պետական մտածողությունները, անկախության գաղափարը, այլև հիմքեր նախապատրաստվեցին Հայկական հարցի լուծման ուղիների որոնման, ազգային գաղափարախոսության ձևավորման համար:

ՈՐՈՆՈՒՄՆԵՐԻ փուլ- 1274-1666թթ.: Ջալալէդդինի, Լենկ Թեմուրի ավերիչ արշավանքներին հաջորդեց թուրքմենական ցեղերի տիրապետության հաստատումը, ապա սկսվեցին թուրք-պարսկական անվերջ թվացող պատերազմները և շուրջ հարյուր տարի պատերազմի թատերաբեմի վերածված Հայաստանը բաժանվեց ասիական բռնատիրությունների միջև: Հայաստանի երկու հատվածներում էլ իրականացվում էին տնտեսական, կրոնական, քաղաքական հալածանքներ: Ժողովրդին ծանր կացությունից փրկելու նպատակով 1650, 1662թթ. Եվրոպա մեկնեցին Ստ.Սալմաստեցի կաթողիկոսի և Աբգար Եվդոկացու պատվիրակությունները: Որոնումների փուլն ավարտվեց անհաջողությամբ:

ԾՐԱԳՐԱՅԻՆ փուլ- 1666-1812թթ.: 17-րդ դարում թուլացում էր ապրում թուրքական բռնատիրությունը: 1645-1669թթ. Վենետիկի հանրապետությունից Թուրքիայի պարտությունը ազատագրության հույսեր ծնեց հպատակ քրիստոնյա ժողովուրդների մոտ:

1663թ. Խաչատուր Գաղատեցի կաթողիկոսը օգնության խնդրանքով դիմեց Ֆրանսիայի թագավորին, ապա ասպարեզ բերվեց հայ-հունական ծրագիրը, որը 1666թ. Եվրոպա տարավ Մահտեսի Մուրադ Բաղիշեցին: 1670թ. Եվրոպա մեկնեց Առաքել Բոբիկը, որը տնտեսական վերլուծություններով ծրագիր ներկայացրեց Ֆրանսիայի թագավորին: 1683թ. հակաթուրքական դաշինք ստեղծելու ծրագրով Վերսալ հասավ Թութունջի Հովհաննեսի պատվիրակու-

թյունը, որոնք դրական տեղաշարժ չմտցրեցին Հայկական հարցի լուծման գործում:

Հայաստանի ազատագրության նոր ծրագիրը հայտնվեց 1699թ., երբ Իսրայել Օրին Պֆալցի իշխանին ներկայացրեց իր ծրագիրը: Օրու երկրորդ ծրագիրը 1701թ. հանձնվեց ռուսական արքունիք: Հաջորդ ծրագրի հեղինակը Հովսեփ Էմինն էր /1763թ./, ապա Մադրասի խմբակը 1773թ., իսկ մինչ այդ, 1769թ. Հայաստանի ազատագրության ծրագիր էր մշակել աստրախանցի մեծահարուստ Սովսես Սարաֆյանը:

ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՄԱՆ փուլ- 1813-1878թթ.: 1813թ. Գյուլիստանի, 1828թ. Թուրքմենչայի, 1829թ. Ադրիանապոլսի, մասնակիորեն 1856թ. Փարիզի, 1878թ. Սան-Ստեֆանոյի պայմանագրերը և Բեռլինի վեհաժողովի որոշումները արծարծելով Հայկական հարցը, միջազգային ճանաչում բերեցին նրան:

ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ փուլ- 1879-1918թթ.: Անհիրագործելի մնացած 61-րդ հոդվածը, սուլթանի՝ Հայկական հարցը արյան ճանապարհով լուծելու քաղաքականությունը ազատագրական պայքարի սկիզբ հանդիսացան: Կազմավորվեցին ազատագրական խմբակները, քաղաքական կուսակցությունները, ասպարեզ եկան անձնանվեր ֆիդայիները, իրականացվեցին մի շարք միջոցառումներ, կազմակերպվեցին ինքնապաշտպանական մարտեր, որոնք ավարտվեցին 1896թ. մայիսյան բարենորոգումների ծրագրով, ինչը մնաց անիրագործելի, որովհետև սկսվել էր աշխարհի վերաբաժանման համար նախապատրաստական շրջանը և ձևավորվող ռազմական բլոկները ուշադրության կենտրոնում էին պահում մարտավարական ծրագրերը, ուժերի հարաբերակցության նժարը իրենց կողմը թեքելու համար: Սկսված հակամարտության արդյունքում, թեև 1914թ. կնքվեց ռուս-թուրքական համաձայնագիրը, սակայն վերահաս պատերազմը այս անգամ էլ անլուծելի թողեց Հայկական հարցը:

Առաջին աշխարհամարտին հայ ժողովուրդը մասնակցեց կամավորական խմբերով, հույս ունենալով, որ հաղթական պատերազմը հնարավորություն կտա լուծելու Հայկական հարցը: Սակայն երիտթուրքական վարչակարգը և յուրովի «լուծում» տվեց Հայկական հարցին: Մեծ եղեռնը ծնունդ տվեց Հայկական հարցի բաղկացուցիչ մաս հանդիսացող ՀԱՅ ԴԱՏ և ՊԱՀԱՆՋԱՏԻՐՈՒԹՅՈՒՆ հասկացություններին, որը ուսումնասիրողներից շատերը շփոթում են Հայկական հարցի հետ:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍՆԱԿԻ ԼՈՒԾՄԱՆ ենթափուլ- 1918-1920թթ.: Նախօրոք մշակված, պետական քաղաքականության վերածված հայկական կոտորածների միջոցով պատմական Հայրենիքում ոչնչացնելով արևմտահայությանը, երիտթուրքական վարչակազմը նպատակադրվել էր նույն ճակատագրին արժանացնել նաև արևելահայությանը: Մայիսյան հերոսամարտերի շնորհիվ հայ ժողովուրդը ջախջախեց պանթուրքիզմի ծրագիրը և վերականգնեց իր անկախ պետականությունը: Գերմանական խմբավորման պարտությունից

հետո լավագույն հույսեր ծնվեցին Հայկական հարցի լուծման համար: 1920թ. օգոստոսի 10-ին կնքվեց Սևրի պայմանագիրը, թվում էր, թե, ի վերջո, լուծվելու է բազմաչարչար Հայկական հարցը, բայց Լենին-Քեմալ համագործակցության արդյունքում տապալվեց Հայաստանի Հանրապետությունը և Հայկական հարցի տնօրինությունը իր ձեռքը վերցրած Խորհրդային Ռուսաստանը, հանուն անիրագործելի համաշխարհային սոցիալիստական հեղափոխության, Թուրքիային նվիրաբերեց հայության պատմական Հայրենիքը:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԼՈՒԾՄԱՆ ՄԻՋԱՆՑԻԿ ենթափուլ- 1920-1923թթ.: Հայաստանի բռնի խորհրդայնացումը, անիրագործելի մնացած Սևրի պայմանագիրը, Հայկական հարցում տերությունների ու բոլշևիկյան Ռուսաստանի ու մեծ տերությունների նոր քաղաքականությունը, 1923թ. Լոզանում, հաղթական դրոշ նվիրվեց պարտված Թուրքիային, մոռացության մատնվեց թե Սևրի պայմանագիրը, թե Հայոց Մեծ ողբերգությունը:

ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ փուլ- 1921-1988թթ.: Հայկական հարցի նկատմամբ ԽՍՀՄ քաղաքականության պայմաններում, հայ ժողովրդի արդար դատը իր ձեռքը վերցրեց սփյուռքահայությունը և անդուլ պայքարի շնորհիվ միջազգային բարձր ատյաններ հանեց այն: Հայկական հարցը նորից կենդանացավ: 1984թ. միջազգային մի շարք կազմակերպություններ քննարկեցին ու ճանաչեցին Հայոց ցեղասպանությունը:

ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՆՈՐ փուլ- 1988-1994թթ.: Փլուզվող բոլշևիկյան կայսրությունը փրկելու նպատակով մեջտեղ բերված «Վերակառուցման» քաղաքականությունը ԽՍՀՄ ժողովուրդներին վերադարձրեց նրանից խլված իրավունքները: Բնական է, որ այդ դիրքորոշման առաջին արձագանքողներից մեկը լինելու էր հայ ժողովուրդը: 1988թ. փետրվարից սկսվեց Արցախյան շարժումը, որին ձայնակցեցին բռնադատված մյուս ժողովուրդները և արագացվեց կայսրության փլուզումը, որի արդյունքում հայ ժողովուրդը վերականգնեց իր անկախ պետականությունը և հաղթանակով ավարտելով Ադրբեջանի դեմ պատերազմը, ազատագրեց Լեռնային Ղարաբաղը:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱՉՄԱՆ ՆՈՐ փուլ- 1995-2002թթ.: Հայկական հարցի ազատագրական պայքարի նոր փուլն ավարտվեց հաղթանակով: Սկսվեց Հայկական հարցի ճանաչման նոր գործընթացը, որն ավելի նպատակային դարձավ 1998թ. իշխանափոխությունից հետո: 1999թ. դեկտեմբերի 4-ին, ԱԳ նախարար Վ.Օսկանյանը Ազգային ժողովի արտաքին հարաբերությունների հանձնաժողովում հայտարարեց, որ միջազգային ատյաններ է բարձրացվելու Հայոց ցեղասպանության ճանաչման խնդիրը: Այսինքն Հայաստանի Հանրապետությունը Հայկական հարցը դնում է իր արտաքին քաղաքականության հիմքում և ազգային գաղափարախոսությունը ընդունում գործունեության ուղենիշ:

2000թ. սեպտեմբերի 9-ին ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայում հանրապետության նախագահ Ռ.Քոչարյանը հայտարարեց.«Օսմանյան կայսրությունում իրականացված հայերի ցեղասպանության շարունակվող ժխտումը Թուրքիայի կողմից միայն ուժգնացնում է պատմական արդարության հասնելու մեր ձգտումը»:

Նույն բովանդակությամբ, 2000թ. նոյեմբերի 9-ին Եվրախորհրդում ելույթ ունեցավ ԱԳ նախարար Վ.Օսկանյանը:

Արցախյան խնդրի միջազգայնացումը, ԵԱՀԿ շրջանակներում վերջնական հաշտություն կնքելու գործընթացը, Թուրքիայի և նրա կամակատար Ադրբեջանի ոչ կառուցողական, պատերազմի սպառնալիքով գործունեությունը այլևս անկարող են ետ շրջել պատմության ընթացքը. քանզի միջազգային հանրությունն արդեն գիտակցում է Արցախյան խնդրի բուն էությունը:

Հայկական հարցի փուլային բաժանումների համառոտ շարադրանքը, փուլերի բովանդակության վերլուծությունը հնարավորություն են տալիս կատարել Հայկական հարցի սահմանում.

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԴԱՐԱՎՈՐ ՊԱՅՔԱՐՆ Է ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ,ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՎԵՐԱՄԻԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ: